

**ՀԱՄԼԵՏԻ «ՀԱՆԳԻՍՏԻ»**

Համլետի դժոխային կյանքին վերջին վայրկյանները շափազանց ուշագրավ են պիեսի խտացյալ թեմատիքայի հայտնաբերման տեսակետեն: Ինձ զբաղեցնողը այստեղ սպառած Համլետի ճիգով արտաքերած վերջին խոսքն է, որը, թերևս, իր դիպով պարզության իսկ պատճառով ուշադրություն չէ գրաված շեքսպիրագիտության մեջ:

Մթնոլորտը անշուշտ շափազանց դրամաթիթ է, ոչ միայն անոր համար, որ ողբերգության վերջն է և բնական է՝ մեկնելով պիեսի տեսակին տեխնիքական սահմանումն իսկ: «Համլետի» պարագային, սակայն, պահին ճգճգվածությունը մասնավոր բնույթ մը կզգենու, երբ նկատի ունենանք պիեսին վրեժինդրության թեմատիքային շուրջ կառուցված ըլլալու իրողությունը, որը վաղ էլիզարեթյան դրամատուրգիայի հսկայական քլիշեներեն մեկն է:

Համլետի, ամբողջ պիեսի ընթացքին, «Հանուն արդարության» ծրագրած վրեժինդրությունը լուծված է ինքնին, արդարությունը արդարության իսկ սիրուն ձեռք բերված է վերջապես, նույնիսկ անձնական կյանքի զոհաբերումով: Արդարության ճամփին անմեղ (*Օֆելիա, Լաերտ*), թե մեղավոր (*Պոլոնիուս, Կլավդիոս*), անմեղ մեղավոր (*Գերտրուդ, Ռուգենքրանց, Գիլտնշթերն*) շատ մարդկային կյանքեր վճարված են արդեն իբրև տուրք մեռյալին վրեժը լուծելու համար, իսկ մեռյալին վրեժը պետք է լուծվի անպայման, ապրողին սրբազն պարտքն է, մանավանդ, երբ «մեկնածը» զոհն է ոճիրի, անարդար, անբնական մահի: Այս մեկը քլասիկայի ժառանգությունն է, հունական հիմնական ապրելածն, ապրողներու կյանքի պայման: Աստվածներեն սկսյալ մինչև Անթի-

կան, Կիթեմնեսթրա, Օրեսթես թէ էտիքուս կշնչեն, կներշնչեն վրհծ-խրնդության արդյունքները, կարտաշնչեն վրեժինդրության պահանջքը Համլետի պարագան հետո չէ անոնցմեն

Համլետի «տասապահնիք ծով» կյանքի թոհուրո՞ղը մոտեցած է իր վախճանին: Հաղթական Ֆորտինբրասի փողերը կլսվին: Համլետ կիսնդրեն Հորացիոնի Ֆորտինբրասին փոխանցել իր համակրությունը և պատմել անոր իր դասն ճակատագիրը: Համլետ հաղիկ կհասցնե այս բոլորը խոսիլ, շնչասպան կշնչա իր վերջին բառերը՝ the rest is silence.

Այս շափականց բազմիմաստ հաստատումը միջազգային շեքսպի-րագիտության մեջ զարմանալիորեն աննկատ անցած է: Կրիթիքական նշանակալի մեկնարանության բացակայության պատճառով դիմեցի ինձի ծանոթ տարրեր լեզուներու յոթ նշանավոր թարգմանություններու, մեկ-նելով այն իրազարկություններն, որ թարգմանիչի մը զործը միաժամանակ կար-տահայտե ավյալ հեղինակին իր տված «լուս» մեկնարանությունը: Բոլոր թարգմանությունները առանց բացառության մեր անգերազանցելի Մա-սեհյանին պես կարտահայտեն նոյն իմաստը՝ «Մնացյալը լուսություն է», այն միտքով, թէ Համլետը չի հասցներ արտահայտելու իր ամրողական բուկիրը և շնչահատ «մնացյալը» աշխարհին պատմելու պարտքը կթող-նու Հորացիոյի ճիտին:

Խնդրո առարկա թեքստը հետեւյալն է.

Oh, I die, Horatio;

The potent poison quite o'er—crows my spirit;  
I cannot live to hear the news from England.

But I do prophesy the election lights  
On Fortinbras; he has my dying voice:  
So tell him, with the occurrents more and less,  
Which have solicited—the rest is silence.

(Գործ. 5, տեսարան 2, տողեր 352—358. տե՛ս նաև Մասհյանի թարգ-մանությունը):

Ներշնչվելով վերե ներկայացված շատ ակնրախ առաջնամերը իմաստեն, որ կթվի աներկրայորեն ընդունված ըլլալ շեքսպիրագիտու-թյան մեջ, դարձյալ շատ զարմանալիորեն, ոչ մեկ շեքսպիրագետ մաքի ընկած է առաջարկել հետեւյալ թեքստային «բարելավումը» (emenda-  
tion)՝, որ ևս անմիջապես կառաջարկեմ նվազագույն վերապահությամբ, քանի որ չի բնդգրկեր ոչ մեկ բառային փոփոխություն: Վերջին երկու տողերը ըստ իս կարող են եղած ըլլալ

So tell him, with the occurrents, more and less,  
Which have solicited the rest—is silence.

Թարգմանարար՝ «Պատմի իրեն Համառոտակի այն դեպքերը, որոնք  
հառաջացուցին մեացյալը—լոռություն է»: Կետազրության պարզ փոփո-  
խությամբ մը կարելի է հասնի ավելի տրամարանական և բնական  
իմաստի մը, դեպքերուն «մնացյալ»-ին, որ Համլետը շի հասցներ արտա-  
հայտելու, որովհետև մահը վրա կհասնի այդ մնացյալը լոեցնելու, ժա-  
մանակավորապես, ոչ թեև լոռության դատապարտելու ընդմիշտ, քանի  
Հորացիոն կմնա, ապրող վկան բոլորին, ամբողջին և ոչ միայն մնաց-  
յալին: Այսպես՝ «մնացյալը —the rest» կվերաբերի նախ և առաջ դեպ-  
քերուն, որոնք եթե Համլետ ապրեր, պիտի ըլլային իր «ըսելիքները» և  
հետո միայն այսպես կվերածվին Համլետի «չկարողացած ըսածներուն»,  
կամ՝ «ըսածներուն»:

Առաջարկած թեքստային փոփոխությունը կզորացնե ակնրախ,  
ընդունված, չհարցադրված իմաստը տողերուն: Սակայն անմիջապես  
ավելացնեմ, որ, առարկելու համար ընդունված իմաստը, կվերադառնամ  
թեքստի օրիգինալ բառային շարահարման: Եվ հու է, որ կկայանա,  
բայ իս, շեքսպիրյան հանճարի անսխալելի շտրիխներեն մեկը:

Նախ նշամարենք, որ Համլետի վերջին խոսքը, the rest is silence  
ի հակադրություն բարդ, խառնաշփոթ, ընդելուզված և դզգված կյանքի  
մը, կարտահայտե այնպիսի վճիտ, նուրբ պարզություն մը, որ նույնիսկ  
քերականորեն ոչ այլ ինչ է, քան նախադասության մը ամենեն էական  
սահմանումը լրացնող պարզագույն օրինակ մը: Պարզապես բայ մը, որ  
էականն և, is, տերբային, the rest և անոր ինդիքը, silence.

Հակառակ որեւէ լեզվի քերականորեն կարելի պարզագույն նախա-  
դասությունը ըլլալուն, Համլետինը ամբողջովին մերաֆորիքա է, բա-  
նաստեղծականության գերագույն նմուշ, այնպիսի կոնկրետ նախադա-  
սություն չէ, ինչպես, օրինակ, «տուփիր կոտրած է», այլ ապստրաքթ,  
խիտ և լի: Պարզ և դիպուկ պատկերներու գերագույն նմուշ, մնացյալը  
լուսվուն է... Պոեթիքական այս գլուխգործոց խտությունն է, որ կներ-  
շնչե ինձ առաջարկել բոլորովին այլ իմաստ Համլետի խոսքին, քան  
ինչ որ բնականորեն ընդունված է ցայժմ, զոր ես չեմ մերժեր: Իմ առա-  
ջարկը իմաստային հավելում է և ոչ թե անպայմանորեն հակասություն:  
Բայ իս, Համլետի ակնրախ իմաստը նախադասության պրոզան

Է! Պոեզիան այլ է! Եվ այդ հետեւամի է!—Շեքսպիրի բառով խոտացրած իմաստախաղը. Համլեթը չի նշանակեր միայն «մնացյալը», այլ իր «հանգիստը», հոգեկան, ֆիզիքական և այլապես Ընդգծելով «լուս-թյան» և «մահվան» մեթաֆորներու ակնհայտ ասոցիացիաները, անկասկած կդառնա, որ Համլետի իմաստը կերթա շատ ավելի խորը նշանակելու համար I shall find my peace in my death—մահվան մեջ միայն կդանեմ հանգիստ։

Անմիջապես ընդգծենք այս մտքին համլետականությունը։ Մի՞թե այս չէ «լինել թե ըինել»-ու կամ «երանի այս պինդ, խիստ պինդ մարմինը» մենախոսությանց հիմնական միտքը, վերջին հաշվով, չէ՞ որ այս է պիեսին ամբողջ ընթացքին Համլետի արտահայտած ֆիլիսոփայական որնեսանսյան կասկածը, սրբաթիստիզմը, հարցադրումը։ տառապե՞լ, կրե՞լ դժվարին կյանքի մը ամենի վիշտը, թե՞ գոնել հոգիի և մարմնի խաղաղությունը անհետեանք մահվան մեջ Բայց արդյո՞ք մահը անհետեանք է։ Եվ կարծեք տեսապես հարցադրող Համլետը, հանկարծ, վերջին վայրկյանին, անխուսափելի մահ մը կարենալ դիմավորելու և դյուտացնելու համար, ինքնամխիթարանքի խարենությամբ մը կսիրե հուսալ, թե մահվամբ ի վերջո պիտի գտնե իր բաղձած վերջնական հանգիստը, երբ ամբողջ պիեսի ընթացքին կասկածած էր այդ մասին։ Ճիշտ այս հակասությունն իսկ այնքան մարդկային է... Հոգեբանորեն այնքան ճշմարիտ, իրավ՝ այդ վայրկյանի ճնշաժամին... անձ մը, որ ամբողջ կյանքի մը ընթացքին կասկածած է, հարցադրած, հանկարծ, վերջին բոպեին կհավատա աստուծո մը...»

Տողերուն իմ ընթերցումս կառաջացնե հսկայական մեկնարանական նոր վեճեր, որոնց ակնարկելե բացի կիսուսափեմ հոս երկարորեն անդրագառնալ։ Անցնիմ մեկնարանությունս հաստատող թեքստային ապացույցներուն։

Թե առաջարկածս իմաստախաղը ներկա է Շեքսպիրի միտքին մեջ, անկասկած է, որովհետե պատկերաբանական վերլուծումը՝ կարենորագույն թեքստային ապացույցը, որ վերջնական կհաստատե մեկնարանությունս, այն փաստն է, որ Հորացիոն, Համլետի խոսքին անմիջապես հաջորդող իր երկու առղերով կստանձնե իմաստախաղային որփարթին, գործածելով նույն բառը։

Now cracks a noble heart. —Good night, sweet prince,  
And flights of angels sing thee to thy rest!

(տող 359—360, տե՛ս նաև Մասեհյանի թարգմանությունը):—Վերջին տողին մեջ rest բառին իմաստը բազմիմաստ անգամ չէ, միիմաստ է, կնշանակե միայն ու միայն «հանգիստ»:

Պատկերաբանական տեխնիքական զորավոր փաստը ինքնին բավարար է հաստատելու տողերուն մեկնաբանությունս: Ինչ որ սակայն շափազանց հետաքրիր է, գոյությունն է թեքստային արտաքին փաստի մը:—«Համլետի» բազմաթիվ քվարթո և Փոլիտ հրատարակություններեն, 1676-ին լույս տեսած քվարթո մը, որուն *Players' Quarto* անոնը կտրվի համլետագիտության մեջ և որ հավանաբար դերասանի մը կողմեն հիշողութենե գրի առնված ըլլա<sup>5</sup>, կպարունակե հետաքրիր վարիանթ մը խնդրո առարկա տողին:—փոխանակ *is silence*-ի ոմի *in silence* մնացյալը ոչ թե լուսություն է, այլ՝ լուսության մեջն է, ուրիշ խոսքով՝ ոչ թե «մնացյալն» է լուսության մեջ, այլ «հանգիստ»-ն է, հոգեկան և ֆիզիքական խաղաղությունն է մահվան մեջ: Հիշենք բազմաթիվ լեզուներու մեջ գոյություն ունեցող ժողովրդական բանաստեղծական պատկերավոր արտահայտությունը լուսության և մահվան ասոցիացիային վերաբերող, *put to silence, թիփիք շեքսպիրյան տող, «լուսության դատապարտել».* գործողություն մը, որ Շեքսպիրի թե պատմության բոլոր բռնապետությունները շատ լավ կգործադրեն... մի՞թե մահը կյանքի մեծագույն բռնաստերը չէ:

#### ՍԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վրեժինդրության թեման շատ հին է միշազգային դրամատուրգիայի պատմության մեջ, թեմայի հնության իրողությունը կպայմանավորե թեմային էությունը բնորոշող պրիմիտիվիզմը: Վրեժինդրությունը հիմնականորեն կապն է մարդկային պրիմիտիվ հասարակարգին և իր կենդանական ծագումին մեջև, և ուրեմն՝ ամեննեն էական մարդկային բնազդը կենդանական մարդուն մեջ: Վրեժինդրությունը, այսպես, պրիմիտիվ մարդկային հասարակարգին մեջ շունդի, անտառի «ամենը ամենուն զեմ» օրենքին, սկզբունքին մեկ ձեմ է, արտահայտությունը:

Հունական քլասիկայի մեջ, վրեժինդրությունը կվերածվի «հանուն արդարության» կատարված գործողության անհրաժեշտության:

Սակայն, հունական ողբերգության մեծ եռյակին՝ էոքիլեսի, Սոփոկլեսի և Ելրիպիկեսի աշխարհայեցողությունը հումանիստական անըմբռնելիորեն արագ, զարմանալիորեն հանկարծակի և խտացյալ հասունությամբ մը, պատմականորեն շատ կարճ ժամանակի մեջ, կզատորոշ և կսահմանե վրեժինդրության զգացողության պրիմիտիվ, կենդանական բնույթը, և կգերազու մարդուն մոտ մարդկայինին պահանջը, որը Սոփոկլեսի, հետևողականությամբ էսքիլեսի, կսահմանե

իրրե զերապույն Տրամարանսթյունը (Reason), Մտքի (Mind), մտածողության ամբապեառմը, մարդկային հասարակարգը ըստ այնմ կրնա զնյաանել միայն ու միայն արամարանության, համոզչականության արգասիքներով օժտված, և ոչ մի վրեժմնողական զգացումին դրսմամբ։ Արգարությունը հնահարար մտքի, և որեմն մարդկային միաբը հատկանշող արամարանության կամ մտածողության ուժին մեջ կկայանաւ։

Եվրիփիկիսր մեկ քայլ ևս կառաջանա և ինքնս կառելի վերջին քայլը եր մոտ արամարանոց մտքի ուժն ալ բավարար չէ մարդկայինին հասնելու համար։ Մարդկային մարդկայնական հասարակարգի կենսական ավեշը կրնա զուանալ միայն ու միայն մարդկարու միջն իրեւազգացուուրյան, իրար հանգեպ համակառնիք զգացուության, սիրո մեց Հասկացուությունը, բարձր մտածողությունը չէ փերց, այլ միացյալ մարդկայնական զգացումը, compassion։

Հին կոտակարանը, ինչպիս մարդկային մշակույթի բոլոր հնագույն կոմիզները, կէնին «արգարության համար վրեժմնողության» զաղագարին վրաւ նոր կտակարանը, կորսեզը և եվրիփիկիսրան աշխարհայցուությունը կամ սիրո սկզբունքը։

Անկատկած է բրիտաննեական զումային վրա պլատոնական փիլիսոփայության հոկտական աղցիսությունը։ Բովիձա Ազգինարու, որ միշին դարերուն վերչնականցուց բրիտաննեական փիլիսոփայությունը կամ զոգման, բույոր դարերուն Պլատոնի փիլիսոփայության մեծ մասնագիտներն մեջ կարելի է նկատել։

Իսկ հունական ողբերգակներու կնիքը Պլատոնի փիլիսոփայության վրա պատկանիք է։ Պլատոնի Համեսը Սոկրատն է։ Սոկրատը եվրիփիկեսի մոտ բարեկամն էր։ Սոկրատյան մտածուության դիալեկտիկական մեթոսը, թեև առկա է էսքիզիսի մոտ, իր լիազույն զործողությունը և զարգացումը կզանն եվրիփիկեսի մոտ, այնքան մը, որ կտակիրազիտության մեջ սխալարար կնկատվի եվրիփիկեսյան բարենիշը, մարդկան, ստորագրությունը։ Ենքսպիրի մոտ բոյրը «պատարանային» տեսարանները նույն բեմական թերենիքն արտահայտություններն են։

Վրեժմնողությունը սակայն, նույնիսկ և մանավանդ ծաղկվելու համար, կմնա աշխարհի ծանոթ հնագույն զրամայի, հունական զրամատուրգիայի հոչշրապույն թեման, երենալով կրիքն Վերածնունդի, մասնագրարար սպանական և անզիփական զրամատուրգիայում։

Ենքսպիրի, եվրիփիկեսի նման բացառաբար կարտացոլե աշխարհայեցության բարեշրջման նույն աստիճանները, ինչ որ զասական ողբերգության նոյակը միասին առած Ենքսպիրագիտության մեջ «Մեծ ողբերգությունները» պիտակավորված չորս պիենները կներկայացնեն մեծագույն օրինակը։ Ենքսպիրը Համես-ով կուռծարկի վրեժմնողության մարդկային հասարակարգը հարաբերություններու մեջ զգեցած արժեվորումները, Մակբերով, Օքելլոյով, հունելու համար Արքա Կիրի փիլիսոփայական մարդաշխարհը ըմբռնողության, սիրո, իրերազգացուության, մարդկու միջն «միազգացուության» զաղագարին։ Ենքսպիրյան մտածողության «զրարգացման» այլ փաստը կմզկ կարդ մը շեքսպիրագիտների պնդելու, որ Ենքսպիրի մոտ վերածնունդան սկեպտիկ հումանիզմեն զեայի շրիտառնեական սիրո սկզբունքին զիտակցված և ծրագրված շրչադարձ մը առկա է։ Նույն մեկնարանության մը կարեռազույն պաշտպանը և սկզբնավորողը մեծ շեքսպիրագիտ պրոֆ. Թիլլյատն է։

**Առանց Շեքսպիրի կողմն բրիտաննեական ծրագրված շրջադարձի թեորիային վրա պնդելու, որուշ շեքսպիրագիտներ ընդհանրապես կընդունին Արքա Լիրով արտահայտված շեքսպիրյան ևզրափակումը, մարդկայնական գերազույն սիրո հասարակարգային արժեվորումնին միտքը: Շեքսպիրը իր վերջին գործով՝ «Փոթորիկ»-ով կթվի վերահաստատել իր արժալիրյան ևզրափակացությունը պրոբեմաթիկայի առնչությամբ:**

Սակայն ինչպէս վերև արտահայտեցի, Հարցը բրիտաննեականցնելու կարիք նրբեմն չկա, որովհետև նման պարագա Քրիստոն դարեր առաջ կցուցաբերեն Եվրափինսը, և թե վերցին հաշվով նունական նումանիզմն է հասարակաց աղյուսը և Երիտաննեական, և որենանյան ճայեցողության:

Կմնա անցողակի հիշատակել ճապոնական դասական նոր գրաման, անգամ մը ևս շեշտելու համար, որ հնագույն դրամատուրգիայի թեմատիքական առանցքը, ճարտարվեստի հիմնաբարը, վրեմինսկրության միտքն է: Այս արդեն նյութ է առանձին ուսաւմնասիրության:

2 Շեքսպիրագիտական տեխնիքական տերմին, կհատկանշել թեքստագիտական բարեւավում վարդիանիթի մը առաջարկը, որը կարելի ըլլա փաստարկել ըստ տպարանային և այլ ձեռագիտային օրենքներու, և դոր այսպես ամսիշապես կորեկտվի շեքսպիրագիտության մեջ իբրև տվյալ թեքստային խճճված խնդրի լավագույն լուծում: Շեքսպիրյան թեքստերու բարոր մեծ հրատարակիչները, հիներեն մինչև մեր օրերը, նիբըլը Ռու, Ալեքսանդր Փոփի, Թիպըլը, տորթըլը Ճռնաըննեն մինչև Տովըր-Ռիմորն նշանակոր են իրենց նման առաջարկներով:

3 Դարասկզբին Վ. Թիեմընի և Փ. Սրբըճնի աշխատանքներով ծնունդ առավ շեքսպիրյան քննադատության մեջ, իմաստախաղային մեկնարանությանց վերլուծումի նոր թեքնիք, պատկերաբանության մեթոդը: Քառուլայն Սրբըճնը քաթալուկային դասավորումի ենթարկեց Շեքսպիրի յուրաքանչյուր պիեսին մեթաֆորները և մաթեմաթիքական ճշգրտությամբ հաշվագրեց անոնց համախակիությունը: Այսպես, օրինակ, «Համլետի» մեջ հիմնական մեսափորիքա է մարմնական հիվանդության զանազան պատկերները: Պատկերներու ուրիշ խումբ կկազմեն մանր կենդանիներու հիշատակությունը: «Ռումեն և Զոլինտի» մեջ հիմնական է խավարի և լույսի պատկերներու վարդիանային մեթաֆիզիքան և այլն և այլն: Թիեմընի աշխատանքը շեքսպիրյան պատկերաբանության հաղորդեց գիտական վերլուծում:

4 Հորացիոյի խոսքը հստակորն շատ ավելի պոռայիք է, թէիժ խոսք՝ նույն այդ միիմաստության պատճառին համար իսկէ: Բազմիմաստությունն է, որ Համլետի խոսքին կներարկե անգերազանցելի բանաստեղծական խտություն, պոեմիզմ: Իմ երրորդ գիրքով (Shakespeare 400, Book Two) անդրագարձած եմ համառոտակի բազմիմաստության և բանաստեղծականության, կամ՝ մեծ պոեզիայի և անոր բազմիմաստ էության սահմանումի, հարաբերության հարցերուն: Կարծ ասած, մեծ պոեզիան ուղղակի համեմատություն մը կկը բազմիմաստության հետ «մաթեմաթիքական» իմաստով: «The Philosophy of Multiple Meaning» ատվար աշխատությունս անտիպ է:

5 Էլիզարեթյան դարաշրջանին, հեղինակի մը պիեսը կպատկաներ այն թատրոնին կամ թատերախումբին, որուն համար գոված կըլլար: Հեղինակը շատ հավանարար խում-

բին ազմինիստրացիային մաս կկազմեր դերասան ըլլալի բացի, և ընդհանուր շահույթի մասնաբաժին կփրցներ:

Ընդհանրապես, երբ թատրոնները փակվեին, սեղոնի վերջին կամ համեմարտիներու պատճառով, այսպես շահույթի նվազումը պատճառ կդանար, որ թատրոնը հրատարակության հանձնե իր «Հարստությունը» կազմող պիեսի մը թերսար, Սակայն մեծ ժողովրդականություն վայելող պիեսները, զանազան անպարկեցա ձեռքով կը «գողացվեին» անարտանազիր հրատարակությանց արժանաւալով:

Եթեսպիրի կարգ մը պիեսներու գեղ բվարթաներու կարգին կպատկանին ապօրին հրատարակությունները, որոնք զրի առնված ըլլալու են խումբին պատկանող զերասանի մը կամ զորավոր հիշողությամբ օժտված «զրոնցին» անհատի մը հիշողութեանն նման «զողացյալ» հրատարակություններու թերսարյին սիրալները բազմաթիվ են, նկատի տնենալով մեկ անհատի «հիշողության վրա կառուցված ըլլալու փաստը»:

Հիշենք նաև, որ ազնվական, ճենթլենական սովորույթ էր զրավանը ունենալ փոքր տեսարակ մը՝ զրի առնելու համար «ազվոր» խոսքեր պիեսներն թե այլապես: Համեմատը կհիշտառակե նման տեսարակ ողիին «հիշե ինձ» խոսքը նոթագրելու համար: